ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«21» 08 2018թ.
N 45-Ա

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«21» 08 2018թ.
N 12/2176

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենը և ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-ՆԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2018թ. հունիսի 15-ի «Բյուջեների կատարման» կարգի 38-րդ կետի պահանջներով՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի Բաղրամյան 26 հասցեի մասնաշենքում կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ վարչապետի աշխատակազմին մատուցում է կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ վարչապետի աշխատակազմը վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2018թ. ապրիլի 9-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.
   1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցումը և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,
   2) Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,
   3) ՀՀ վարչապետի աշխատակազմում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,
   4) Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,
   5) Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ վարչապետի աշխատակազմը չի կատարում Ծառայությունների դիմաց բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4) ենթակետի:
4. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.
   1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,
   2) Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,
   3) Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը:

№	Տեղադրման վայրը	Կառավարական միջքաղաքային կապ	Լրացուցիչ կառավարական միջքաղաքային կապ	Կառավարական քաղաքային կապ	Լրացուցիչ կառավարական քաղաքային կապ	Ազդանշանային հարմարանք
1.	փոխվարչապետ	1 x 225 000				225 000
2.	աշխատակազմի ղեկավար	1 x 225 000		1x 500 000		725 000
3.	աշխատակազմի ղեկավարի ընդունարան		1x 112 500		10 000	122 500
4.	ազգային անվտանգության խորհրդի քարտուղար	1 x 225 000				225 000
5.	ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի ընդունարան		1x 112 500		10 000	122 500
6.	ազգային անվտանգության խորհրդի քարտուղարության ղեկավար	1 x 225 000				225 000
7.	գլխավոր խորհրդական	1 x 225 000				225 000
8.	գլխավոր ռազմական տեսուչ	1 x 225 000				225 000
9.	գլխավոր ռազմական տեսուչի ընդունարան				10 000	10 000
10.	խորհրդական	1 x 225 000				225 000
11.	խորհրդական	1 x 225 000				225 000
12.	խորհրդական	1 x 225 000				225 000
13.	օգնական	1 x 225 000				225 000
14.	օգնական	1 x 225 000				225 000
15.	օգնական	1 x 225 000				225 000
16.	վերահսկողության ծառայության պետ	1 x 225 000				225 000
17.	վերահսկողության ծառայության պետի ընդունարան				10 000	[illegible]
18.	մամուլի քարտուղար	1 x 225 000				225 000
19.	հատուկ հանձնարարությունների դեսպան	1 x 225 000				225 000
20.	աշխատակազմի գործերի կառավարիչ	1 x 225 000				225 000
21.	Արարողակարգի ղեկավար	1 x 225 000				225 000
22.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	17 x 100 000				1700 000
	ընդամենը տարեկան վարձը					6 290 000
	ինը ամսվա համար					4 717 500
					Չորս միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր դրամ	

4) Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ ԱԱԾ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով:
5) Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,
6) ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____ Ա. Վանեցյան

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 90001830101
հվհհ 01507079

Կ.Տ.

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար

_____ Է. Ավդաջանյան

ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011022085
հվհհ 02505554

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն _____ հեռախոս՝ 1-99